ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
Գ ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՔԱՐՈԶՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԿՈՂՄԵՐՈՒՄ

«Եւ եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ եւ յամենայն Հրէաստանի եւ ի Սամարիա եւ մինչեւ ի ծագս երկրի» (Գործք Ա 8):

Հիսուս Քրիստոս Իր Հրաշափառ Հարությունից հետո և երկինք Համբառնալուց առաջ, Իր շուրջը հավաքված տասներկու առաքյալներին ուղղեց աշխարհում Իր արտասանած վերջին բառերը՝ ասելով. «Երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, զորություն պիտի առնեք և ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը» (Գործք Ա 8):

Ուստի, մինչև Հոգեգալուստ, առաքյալներն իրենց օրերն անցկացնում էին միայն աղոթքով՝ առանց որևէ արտաքին գործով իրենց մտքերն զբաղեցնելու ու հոգնեցնելու: Մի խոսքով, առաքյալներն իրենց պատրաստում էին երկնային զորությունն ընդունելուն:

Այնուհետև, երբ լրացան Պենտեկոստեի օրերը, բոլոր առաքյալները «միասիրտ, միատեղ էին» (Գործք Բ 1-2): Եվ հանկարծ երկնքից հնչում է մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման, և լցնում ողջ այն տունը, ուր նրանք նստած էին, և բոլորը լցվում են Սուրբ Հոգով (Գործք Բ 4):

«Սուրբ Հոգու գալստյան բուն իմաստը՝ աշակերտների վրա Աստվածային շնորհների ներքնապես հեղումն է» («Համապատում», Ս. Էջմիածին, 1997, էջ 874):

«Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել այլ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք Բ 4):

Երբ լեզվախոսական հրաշքի մասին լսվեց ամեն կողմում, «բազմությունը հավաքվեց ու խռնվեց» վերնատան շուրջը: Նշենք, որ ինչպես միշտ, այդ օրն էլ Երուսաղեմում բազմատեսակ բազմություն կար, այսինքն՝ գաղթօջախներից եկած հրեաներ, հրեությանը դարձածներ, հեթանոսներ (ի դեպ, «հեթանոս» բառը պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր իմաստներով է ընկալվել, այսպես՝ Ս. Գրքում այն հիմնականում օգտագործված է «այլազգի» (ոչ հրեա), իսկ միջնադարյան գրականության մեջ՝ «անհավատ» (ոչ քրիստոնյա) նշանակությամբ), որոնք հիանում էին ու զարմանում այդ արտակարգ երևույթից. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են, բայց ինչպե՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով, որ ծնված օրից խոսում ենք» (Գործք Բ 7-8):

Ավետարանիչը ներկաներին հիշատակելու ժամանակ թվարկում է զանազան երկրների անուններ՝ Պարթևաստան, Մարաստան, Իլամ-Ելամ, Միջագետք, Հրեաստան, Գամիրք-Կապադովկիա, Պոնտոս, Ասիա, Փոյուգիա, Պամփյուլիա, Եգիպտոս, Լիբեա, Կյուրենե, Կրետե ու Արաբիա (վերջինս ոչ մի կապ չունի այսօրվա Արաբիայի հետ):

Ի դեպ, նշենք, որ եկեղեցական երևելի հայրերից Բ դարի աստվածաբան Տերտուղիանոսը և Օգոստինոս Ավրելիոս Հիպոնացին, «Գործք Առաքելոց»-ի իրենց ձեռքին եղած օրինակներում, երկրների վերը նշված թվարկման մեջ կարդացել են՝ նրանք, որ բնակվում են Միջագետքում, Հայաստանում ու Գամիրքում[1]: Եվ իսկապես, քանի որ նրանք օգտագործել են Սուրբ Գրոց ամենահին և Vetus Latina կոչված թարգմանությունը, ուստի Հրեաստանի փոխարեն դրել են Հայաստանը: Ի բաց առյալ այդ, թե՛ տեղագրական ճշտությամբ և թե՛ տրամաբանական ընթացքով, Միջագետքի ու Գամիրք-Կապադովկիայի մեջտեղում գտնվող երկիրը Հայաստանն է՝ Մեծ Հայքի թագավորությունը:

Այդ հաստատվում է նաև պատմական տեսանկյունով, որովհետև, ինչպես վկայում են Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին, «Տիգրան Մեծ թագավորն այս բոլոր հրեությունն իր դարում բերեց-բնակեցրեց Հայաստանի քաղաքներում»: Ի վերջո, առաքյալների հրեերեն լեզվով խոսելը ո՛չ հրաշք էր, ուստի և ո՛չ էլ զարմանք ու հիացմունք կարող էր պատճառել. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են» (Գործք Բ 7):

Սուրբ Հոգու շնորհներով զորանալով՝ տասներկու առաքյալներն սկսեցին կենաց խոսքի քարոզությունը: Նրանց քարոզչությունը կարելի է բաժանել երեք շրջանների.

ա) Քրիստոնեության տարածումը Երուսաղեմում.

բ) Քրիստոնեության տարածումը Երուսաղեմի շրջակայքում ու ողջ Պաղեստինում.

գ) Քրիստոնեության տարածումը Փոքր Ասիայում, Հռոմում, Հնդկաստանում և այլուր:

Բնականաբար առաքյալները, Տերունական օրինակով, թե՛ Պաղեստինում և թե՛ ողջ աշխարհում նախ կենաց հացով կշտացրին մանուկներին, այսինքն՝ Իսրայելի ընտրյալներին, իսկ այնուհետև ձեռնամուխ եղան Տիրոջ պատգամի իրականացմանը. «Ես ունեմ նաև այլ ոչխարներ, որոնք այս փարախից չեն, նրանց ևս պետք է այստեղ բերեմ. և իմ ձայնը պիտի լսեն. և պիտի լինի մի հոտ և մի հովիվ» (Հովհ. Ժ 16):

Այսպիսով, առաքյալների միջոցով (իհարկե Պողոս առաքյալի սկզբնավորությամբ) Տիրոջ փրկագործությունը հեթանոսների, այսինքն՝ այլազգիների վրա էլ էր տարածվում, և այդպիսով, այսինքն՝ նույն հավատքով միացած, մի փարախի միակ հոտը պիտի կազմեին թե՛ այլազգիները և թե՛ հրեաները, և Հիսուս Քրիստոս պիտի լիներ բոլորի միակ «քաջ հովիվը»:

---

[1] Մաղաֆիա արք. Օրմանյան, «Համապատում», էջ 881, տե՛ս նաև «Հայ Եկեղեցու հիմնադրումը և կազմավորումը մինչև Դ տիեզերական ժողովը», էջ 38:

«Արևից շառավիղող ճառագայթի նման Հիսուսի տասներկու առաքյալները և Հիսուսին հետևող աշակերտները տարածվեցին աշխարհի չորս կողմերը և երկնային Լույսի շողերը ցանեցին ժողովուրդների կյանքերում:

Առաքյալների Քրիստոսատուր իշխանության և Քրիստոսասպարգև հավատի վրա հիմնվեցին Քրիստոսի եկեղեցիները՝ բազում ազգերի և երկրների մեջ»:

Առաջին հերթին իհարկե Երուսաղեմում ու Պաղեստինում, այնուհետև՝ Ասորիքում, Կիպրոսում, Միջագետքում, Հայաստանում, Կապադովկիայում, Պարթևաստանում, Փոքր Ասիայում, Հնդկաստանում, Հռոմում և այլուր:

Այնպես որ, մոտավորապես 50-ական թվականներին Պողոս առաքյալը գրում էր. «...Գոհություն եմ մատուցում իմ Աստծուն, Հիսուս Քրիստոսի միջոցով, նրա համար, որ ձեր հավատը պատմվում է ամբողջ աշխարհում» (Հռոմ. Ա 8), և «աճում ու պտղաբերում է ամբողջ աշխարհում» (Կող. Ա 6):

Ա) Հայաստանում քրիստոնեության մասին տեղեկություններ, մինչև առաքյալների քարոզչությունը:

Ինչպես վերը նշեցինք, Հայոց Տիգրան Մեծ արքան (95-55 թթ.), իր պաղեստինյան արշավանքից հետո, Հայաստան է վերադառնում բազմաթիվ հրեաների, Հյուրկանոս քահանայապետ-թագավորի հետ միասին: Տիգրան արքան նրանց բնակեցնում է Հայաստանի քաղաքներում, այսինքն՝ Արտաշատում և նրա շրջակայքում, Երվանդաշատում, «Ծամիրամի քաղաքում», այն է՝ Բզնունյաց (Վանա) ծովի ավազանի քաղաքներում և այլուր:

Ինչպես տեսնում ենք, Տիգրան Մեծի ժամանակ իսկ Հայաստանում, նրա իսկ միջոցով, ձևավորվում են հրեական համայնքներ, որոնք բնականաբար շփվել են հայերի հետ, ընդունել են նրանց լեզուն ու մշակույթը, բայց միաժամանակ պահպանելով իրենց կրոնական ու մշակութա-կենցաղային որոշ առանձնահատկությունները:

«Ամեն հրեայի համար օրենք էր զատիկը կատարել գառնակերությամբ և բաղարջակերությամբ և ամեն բարեպաշտ հրեայի համար էլ օրենք էր զատկական զոհ մատուցելը, իսկ զոհի համար էլ անհրաժեշտ էր Երուսաղեմ գնալ, քանի որ տաճարից դուրս զոհ մատուցելը օրենք չէր» («Համապատում», էջ 54, Բ Օր. ԺԶ 16):

«Դեռ շատ վաղուց առևտրական և քաղաքական հարաբերությունները Հայաստանին սերտորեն կապել էին հրեաների հետ» (էջ 40):

Ահա այս տեղեկություններից մենք ենթադրում ենք, որ ինչպես մ.թ.ա. I, այնպես էլ մ.թ. I դարերում շատ հայեր, առևտրական նպատակներով, ինչպես նաև Հայաստանում բնակվող հրեաները, զուտ ազգային նպատակներով, գնացել են Երուսաղեմ: Եվ հավանական է, որ նրանք իրենց ճանապարհորդության և Պաղեստինում ու Երուսաղեմում գտնվելու ժամանակ ծանոթացել են Հիսուս Քրիստոսի նոր վարդապետությանը և, գալով Հայաստան, պատմել են իրենց ազգականներին ու բարեկամներին՝ բնականաբար մեծ հետաքրքրություն առաջացնելով նրանց մոտ նոր վարդապետության նկատմամբ:

Այսպիսով, վերը նշված տեղեկություններից ենթադրում ենք, որ շատ հավանական է, որ նախքան Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի քարոզչությունը ի Հայս, այդ ճանապարհով Հայաստան թափանցեին Հիսուսի նոր վարդապետության մասին տեղեկություններ և հող նախապատրաստեին առաքյալների

քարոզությանը: Քանի որ, ինչպես գրում է Հայկ Մելքոնյանը, «նոր վարդապետությունները ո՛չ մի երկրում, ո՛չ մի ժողովրդի մեջ պարտադիր չեն ընդունվում, եթե դրանց համար համապատասխան պայմաններ չեն ստեղծվել»[2]:

Բ) Ս. Թադեոս առաքյալ:

Ըստ նախնական ու հաստատուն ավանդության, Հիսուսի տասներկու առաքյալներից, Ավետարանի Կենաց լույսը Հայաստանում քարոզելու նպատակով, Արևելք եկան Ս. Թադեոսն ու Ս. Բարթողիմեոսը, որոնց քարոզությամբ էլ դրվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմքը:

Ինչպես հայկական ավանդությունն ու ասորական (նշենք, որ ոչ բոլոր) աղբյուրներն են վկայում, Հայաստանի երկու Լուսավորիչներից առաջինը Ս. Թադեոս առաքյալն իր քարոզությունը սկսեց Հայոց կողմերում: Ուստի նրա անունով Հայոց աշխարհը հոգևոր իմաստով ստացավ «Վիճակ Թադէի» անվանումը, իսկ դասական պատմիչներից Փավստոս Բուզանդը հստակորեն Հայոց Հայրապետական Աթոռը կոչեց «Թադեոս Առաքյալի Աթոռ»:

Ս. Թադեոս առաքյալի մասին Մատթեոս Ավետարանիչը Ղեբեոս (Մատթ. Ժ 3), իսկ Ղուկաս Ավետարանիչը՝ Հակոբոսի որդի Հուդա (Ղուկ. Զ 16) անուններով են հիշատակում: Ինչպես վկայում է Արթուն Հատիտյանը, Թադեոսի գրչին է պատկանում Նոր Կտակարանի Հուդա առաքյալի ընդհանրական թուղթը: Նշենք, որ Հովհաննու Ավետարանում «Տեր, ինչպե՞ս եղավ, որ քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին» (Հովհ. ԺԴ 22) Հիսուսին միամտորեն հարցնողը Թադեոս առաքյալն էր:

«Գործք Առաքելոցը» ոչ մի տեղեկություն չի տալիս Ս. Թադեոսի առաքելական գործունեության մասին: Բայց մեզ հասած ավանդություններից տեղեկանում ենք, որ Թադեոսն իր առաքելական քարոզությունն Արևելքում հասցրել է մինչև Աղվանք, իսկ Արևմուտքում՝ մինչև Մաժաք–Կեսարիա, որտեղ էլ հաստատել է Եպիսկոպոսական Աթոռ:

Սրբազան առաքյալն իր հետ Հայոց աշխարհ է բերել, որպես նվիրական սրբություն, Սուրբ Գեղարդը, որով հռոմեացի զինվորը խոցել է Հիսուսի կողը՝ խաչից վար առնելուց առաջ: Ս. Գեղարդը պահվել է Այրիվանքում, որտեղից, այնուհետև, տեղափոխվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր գտնվում է մինչև այսօր: Ս. Թադեոսն իր հետ Հայաստան է բերել նաև Սուրբ լուսը՝ Մյուռոնը:

Հարկ ենք համարում նշել, որ ոմանք (այդ թվում՝ Մովսես Խորենացին) Սուրբ Թադեոս առաքյալին համարում են ոչ թե տասներկուսից մեկը, այլ՝ յոթանասուներկուսից մեկը: Մինչդեռ, ինչպես և վերը նշեցինք, Ս. Թադեոսը, ըստ Մատթեոս և Ղուկաս Ավետարանիչների, տասներկուսից մեկն է:

Սակայն ի՞նչն է պատճառը, որ Ս. Թադեոսը նաև յոթանասուներկուսից մեկն է համարվել: Ահա այս հարցին միանգամայն սպառիչ պատասխան է տալիս Եռամեծ Վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին. «Եւ այս է [ստոյգ] պատճառն որ ոմանք [զԹադէոս առաքեալն] յեօթանասնից ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր» («Գիրք հարցմանց», էջ 549):

---

[2] «Էջմիածին», 1978, Է, էջ 51:

Գ.) Ս. Թադեոս առաքյալի քարոզությունն ի Հայս:

Մ. թ. I դարի սկզբին գրված Պոմպեոս Տրոգոսի պատմական երկում կարդում ենք. «Չի կարելի լռությամբ անցնել այդպիսի մեծ թագավորության կողքից, ինչպիսին է Հայաստանը, քանի որ նրա սահմանները, Պարթևաստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմանները»: Հիրավի, Մեծ Հայքի թագավորության սահմաններում տակավին մ. թ. I դարի սկզբներին ընդգրկված էր շուրջ 310.000 քառակուսի կիլոմետր տարածություն: Արդ, եթե Հայաստանն իր տարածքային ընդարձակությամբ և քաղաքական կշռով Հին աշխարհի Հռոմից ու Պարթևաստանից հետո III պետությունն էր, և եթե I դարում առաքյալները քրիստոնեություն էին քարոզում Փոքր Ասիայի փոքրիկ թագավորություններում, ապա, բնականաբար, չէր կարող անտեսվել Հին աշխարհի III պետությունը՝ Մեծ Հայքը:

Եվ իրոք, Հոգեգալուստից հետո, մեկ տարի անց, քրիստոնեությունը քարոզելու համար, Արևելք եկան Սուրբ Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները, որոնցից առաջինը Ս. Թադեոսն էր, որ Ավետարանի լույսը բերեց «Ի Հայս», աստվածաշնչական «Երկիրն Արարատայ» և լուսավորեց «տունն Թորգոմայ»:

Նշենք, որ Թադեոսի քարոզության մասին զրույցը՝ սկզբնավորված I դարում Հայոց միջավայրում, երկու-երեք դար անց գրի առնվելով ասորերենով, տարբեր մշակումների, խմբագրումների ու հավելումների ենթարկվելով,-որպես գրավոր սկզբնաղբյուր հանդես էր եկել համառոտ (հունարեն թարգմանությունը պահպանվել է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ում) և ընդարձակ շարադրանքներով (Լեբուբնայի (Ղեբուբնա) «Ադդէոսի վարդապետութիւնը»), որոնք իրենց գաղափարական ուղղվածությամբ և բովանդակած նյութով մասամբ հեռացել են հայերեն բանավոր՝ սկզբնական ավանդությունից: Իր հերթին Ե դարի հայ թարգմանիչը՝ Սամվել եպիսկոպոսը, ձգտել է վերականգնել ավանդության հայկական հիմնաշերտը՝ «Թուղթ Աբգարու» թարգմանությամբ:

Ինչպես տեսնում ենք, ասորական աղբյուրների և հայկական ավանդության միջև կան տարբերություններ, սակայն այդ էական նշանակություն չունի, կարևորն այն է, որ այդ բոլոր աղբյուրներն ու հայկական ավանդությունը հաստատում են, դեռ ավելին, քույր Եկեղեցիները պաշտոնապես ընդունում են, որ իրոք տասներկուսից մեկը՝ Թադեոս-Ղեբեոս-Հուդա-Ադդա առաքյալը, նախ քարոզչական գործունեություն ծավալելով Օսրոյենեի թագավորությունում և դարձի բերելով նրա Աբգար V թագավորին (որին Մ. Խորենացին պատմական հենքի վրա ներկայացնում է իբրև Հայոց թագավոր), ապա անցել է Մեծ Հայք՝ Բարի Լուրն ավետելու Աբգարի քրոջ որդուն՝ Սանատրուկին, Մեծ Հայքի արքային:

Բնականաբար, Թադեոս առաքյալն ինչպես Եդեսիայում՝ «մտնելով հրեա իշխան Տուրիայի տունը, լուսավորում էր նրանց Երկնային Լույսով», այնպես էլ Մեծ Հայքում նախ քարոզել է հրեական միջավայրում, ապա՝ հայկական:

Եվ, շնորհիվ Թադեոսի առաքելական գործունեության, տակավին I դարում Հայաստանում ստեղծվում են բազմաթիվ քրիստոնյա համայնքներ ի դեմս Մծուրքի, Աշտիշատի և Արտազի, որտեղ էլ Ս. Թադեոս առաքյալն ու արքայադուստր Սանդուխտն արժանանում են նահատակության անթառամ պսակին:

Համաձայն սրբազան ավանդության, Ս. Թադեոսի նահատակության վայրում, ինչպես վկայում են Ջենոբ Գլակն ու Պատմահայր Մ. Խորենացին, հայ հեթանոսական մեհյանի հիմքերի վրա կառուցվում է Ս. Թադեի վանքը:

Դ) Թադեոս անունը կրող և իրենց գործունեությամբ սրբազան առաքյալի հիշատակը արժանորած հայեր:

Համաձայն Հրաչյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի»[3], 95 անձ կրել է Թադեոս անունը: Ահա մեր կարծիքով նրանցից առավել նշանավորները.

ա) Թադեոս՝ «այր անպարտելի գրչութեամբ», որն ուղեկցեց Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին Կոստանդնուպոլիս ճանապարհորդելու ժամանակ.

բ) Թադեոս վարդապետ՝ Հեթում Ա թագավորի ձեռնասուն որդի և հիմնադիր Ս. Փրկիչ անապատի, որտեղ իր կյանքի վերջում պետք է ճգներ Հեթում թագավորը.

գ) Թադեոս միայնակյաց՝ «հեզ և խոնարհ, առաքինի և յոյժ արդար». երիտասարդ տարիքում նա հրաժարվում է ծնողներից, տնից ու հարստությունից և ճգնավոր դառնում՝ ուսուցիչ ունենալով համանուն մի անձի: Թադեոս միայնակյացը հռչակվում է իր ճգնությամբ, և նրա անունը շատ գյուղերում ու քաղաքներում է տարածվում.

դ) Թադեոս եպիսկոպոս՝ նվիրակ Ս. Էջմիածնի և Արմաշի նշանավոր վանքի հիմնադիր:

Այսպիսով, մեր խոսքը հանրագումարի բերելով, եզրակացնում ենք, որ I դարի առաջին կեսին Հայոց աշխարհում, քրիստոնեության արշալույսին, Առաքելական քարոզությունը հոգևոր հավատով պարարտ հող գտավ. քրիստոնեությունն ընդլայնվեց հավատի լուսեղեն ակունքներից, և դրվեց Հայոց Եկեղեցու հիմքը՝ ի դեմս բազմաթիվ քրիստոնեական համայնքների (Մծուրք, Աշտիշատ, Արտազ) և Ս. Թադեոս առաքյալի նվիրական հաստատության՝ սրբանվեր գերեզմանի:

---

[3] Երևան, 1944, հատ. Բ, էջ 244–255: